



# ԹՎԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



ՄՐԾԱԿ ՄԱՐԴՈՅԱՆ

## ՀԱՅՈՅ ԿԵՆՅԱՀԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Դարերի բնումնավոր ճամապարհ անցած հայագիտությունը մինչև օրս չունի հայ մշակույթի ամփոփ պատմությունը: Անշուշտ, այդ խնդիրը կապված է բարդությունների հետ: Սակայն զարգացման արդի փուլում լիովին հաստինացած խնդիր է այդպիսի պատմության ստեղծումը: Կատարված են նախաքայլեր, գիտության, գրականության, արվեստի, այլ բնագավառների մասնագետների աշխատանքը փառատորեն նախապատրաստել և հնարավոր է դարձրել այն:

Ունենք մշակույթի «բաղադրիչ» բնագավառների այս կամ այն չափով հաջողված պատմություններ, որոնց մեջմակները կիրառել են պատմամշակութային մետագորության իրենց չափանիշները, ըմբռումներն ու մեթոդները՝ աշխատելով բացահայտել նաև տարրեր բնագավառների երևույթների փոխմերթափանցումն ու փոխազդեցությունները:

Այդիսական հնարավորին չափ համակողմանի մոտեցում է ցուցաբերվել մշակույթի առանձին ճյուղերի, մետևաբար և ամբողջական մշակույթի ոսումնասիրությանը: Գլխավոր բարդությունը հարուցում է հետազոտության շրջագծի «միջառարկայական» բնույթը, և ցանկալի է գիտելիքի տարրեր բնագավառներ ներկայացնող մասնագետների շանքերի համարում:

Մշակույթի համապարփակ պատմություն ստեղծելու ճամապարփին կարևոր առաջքայի է այլևայլ կարգի ու ծավալի գրքերի, հանրագիտարանների հրատարակումը: 1932 թ. հոկտեմբերի 24-ին Հր. Աճառյանն էջմիածնի մատենադարանի վարչությանը հիմա նամակում գրում էր. «Դմ առաջարկութեամբ և առաջնորդութեամբ Կարօ Ղաֆադարեանը ձեռնարկել է կազմել ընդարձակ և կարևոր մի աշխատութիւն, «Կենցաղային բառարան»... որ պիտի պարունակէ բառարանի կաղողվ հին հայոց կենցաղը, միստ ու կացը, սովորութիւնները ևն ևն»<sup>1</sup>:

<sup>1</sup> Հրաշեայ Աճառեան, Նախակներ, Երևան, 2003, էջ 37:

Ցավոք սրտի այդ աշխատանքը չիրագործվեց և, հասկանալի է, օրակարգից հանկած չէ: Այսօր մենք առիթ ունենք ողջունելու «Հայոց ժողովրդական մշակույթը» հանրագիտարանի առաջին հասորի լուսավեճայում<sup>2</sup>: Այսպիսի գործ ձեռնարկելու համար պահանջվում են համակողմանի գիտանքներ, որ, բարեքախտաբար, ունի գործի բազմարդյուն հետինակ Գրիգոր Կարախանյանը: Իր կեսարյա գիտական գործունեության ընթացքում ուսուցված շրջել է իրեն մատչելի հայաշխարհը, հնագիտական ուսումնասիրություններ է կատարել բազմաթիվ հնավայրերում, «պեղել» է միջնադարյան ձեռագիրը, գրատեղ դաշտային արշավների ու պարզ ճամփորդությունների ժամանակ տեսածն ու լսածը, այդ թվում բանահիուական գեղեցիկ նմուշներ, ավանդություններ, մանկական խաղեր, աննշան թվացող մամրամասներից սկսած մինչև առավել լայն, համազգային հնչողության տուններ, հավատալիքներ, ասացվածքներ, անեծքներ ու օրինություններ, ամեն-ամեն ինչ, որ կարող է յուրովի լուսավորել ժողովրդի առումնին կյանքը:

Հասկանալի է, հեղինակը մեծապես օգտվել է մատենագրություննից (հայրենի և օտար), այդ թվում՝ պատմիններից, գեղարվեստական գրականություննից բացի նկատի է ունեցել Աստվածաշնչի մեկնություններ, Կանոնգիրը, Տոնացուց, Դատաստանազրելեր, առանձին ազգագրական շրջաններին նվիրված աշխատություններ, մամուլ, հանրագիտարաններ, բառարաններ, հնագիտական, ազգագրական, բանահիուական հյութ, գրառումներ գիտարշավներից, հնադիպումներից:

Հեղինակի առջև ծառացած առաջին գրքի ընդգրկման շրջանակները որոշելն էր: Միշտ չէ, որ մեջտեղ է տարածատել, ասենք, մասնագիտացվածը ժողովրդականից: Այդ մասին հեղինակը խոստովանում է: «Աշխատասիրողին դյուրին չի եղել ժողովրդական մշակույթի ստույզ սահմանները որոշելը: Հաճախ այն ընկալվել է լայն ընդգրկումով՝ տեղ տալով բառահոդվածների, որոնք այս կամ այն շափով նպաստում են ժողովրդական մշակույթի բառահոդվածների բովանդակության բացահայտմանը» (Էջ 10):

Հավաքված հնկայական հյութն ամփոփված է մի աշխատությունում, որ, ինչպես հեղինակն է նշում, բաղկացած է շուրջ ուր հազար բառահոդվածից, ընդգրկում է «ժողովրդի բարքերն ու սովորությունները, հոգևոր, աշխարհիկ տոներն ու խաղերը, ծեսերն ու կենցաղի այլ իրողությունները» (Էջ 9): Պատշաճ ուշադրության են արժանացել «ավանդական» ժողովրդական բժշկությանը վերաբերող հյութերը, հոգևոր և հյութական մշակույթի ոլորտի որոշ ընդհանուր բռույթի բառահոդվածներ:

Գրքի հաջողությանը մեծապես նպաստել է հեղինակի սուր դիտողականությունը: Մատենագրությունից նրա քաղաքացիությունները հետաքրքիր են շատ ամենալավին: Արդի հովետնի բառարամներն ունեն Արձակագիր բառամուված, ուր տրվում է բառին այժմյան իմաստը, իսկ գրաքարյան բառզրեքը առհասարակ չունեն այն: Սովոր հանրագիտարանն այդ բառը բացատրում է որպես արձակման գիր՝ «վկայական պարտքից ազատ, պարտքը վճարած լինելու մասին» (Էջ 66): Սրան նման է և Դեղագործությունը, որ բացատրվում է՝ գեղանկարչություն (Էջ 152): Իսկ Դեղագործ ծանոթ իմաստից զատ նշանակում է գեղանկարիչ, նաև «ներկեր պատրաստող և այլն»:

<sup>2</sup> Գրիգոր Կարախանյան, Հայոց ժողովրդական մշակույթը, Հանրագիտարան երկու հատորով, հատ. Ա, Երևան, «Գիտություն», 2003:

Կերպարվեստին առնչվող եզրույթմերից հիշենք նաև կտակ Ակադամիական (Էջ 325), որի համար Գր. Կարախանյանը Մաշտոցյան Մատենադարանի 2173 ձեռագրից շատ կողմերով նետաքրքրական վկայություն է քաղել. «յորժամ նոր արքայ աշխարհակալ յայտոք թագաւորութեան նատիցի, և զիրո թագաւորական հրամանի յաշխարհն առաքից, ի բազմամբոյն ժողովս քաղաքաց, և ի յոզմակի շինուածն փողոցացն աւետեա իմն Բնշին և բերկրական դիմաց տեսութիւն և խրախնանութիւնն ամենապատիկն. ընդ բոլոր հրապարակն քաղաքին առնիցեն զարդարելով ի բազմածաղիկ Ակադամիական կուտացան ծածկութից, ծառ և ծաղիկն ուստոց, և համարդամ պտղոցն գեղեցկութիւն վայելացուցանն զիւրաքանչիր զդրուն և զիսամութ» (Էջ 315):

Հայտնի, մեզ ծանոթ շատ երևույթներ ստանում են առավել խոր բացատրություն, ամրապնդվում մատենագրական տվյալներով: Այս Գիճի արկաններ ի գետին և Գիճի թափել յանուան մեռելի բառաթողվածները՝ նվիրված հնագույն հեթանոսական սովորութիւն, որ ցայսօր նույնպես հարատևել է: Քսաններորդ դարում Ծիրակից ունենք Մկրտիչ Արմենի «Հեղմար աղբյուղի» հայտնի դրվագը, որ ընթերցողին թվում է արհեստավորական սովորություն... Ծիրակավան զյուղի մոտ հայտնաբերված քարարկո-գերեզմանները հնատուկ բացվածքներ ունեն «հեղման արարողության համար» և հուշում են, որ այս սովորություն հազարամյակների հանապարհ է անցել: Բայց արժե հիշել և Գրիգոր Տայենացու Ակատողությունը. «Զի՞նչ է որ լըմպել զգիմին թափեն յանուան մեռելին: Հեթանոսական սովորութիւն էր որ զինչս մեռելոյն ընդ նմա դմէին ի գերեզմանն. և յետոյ զբաժին նոցա ի վերայ լնուին. նոյնպես ի տունս և ի դուրս յորժամ յիշեին: Զայս սովորութեամբ առնեն զոր չէ պարտ, զի յուսահատութեան է նշան և հեթանոսաց գործ» (Էջ 118):

Սովորություններին վերաբերող մի փաստ հետինակը գրառել է Արցախում. «Սափելիս նորահետի զլիխն կամ աշ ալտին վարսավիրի թողած հեթափունքը կամ մազը, որը ածիլ-վում է սափելոլ ավարտին Ավել ստամալու ակնկալությամբ» (տե՛ս Խչմելիք, Էջ 270):

Այսպես և մյուս ոլորտների, մասնավորաբար ժողովրդական բժշկության, այլևայլ կիրառական զիտելիքների Ավելի ստամալու ակնկալությամբ:

Շատ բառաթողվածներ լրացնում են հայոց լեզվի բառարանների իմշ-ինչ, թերևս անօշան բացթողումներ: Եղբայրացիր բառը հայտնի է իրքն հայկական ծածկագրության տեսակներից մեկը: Բանահյուսական, ազգագրական հյութերի ուսումնասիրությունը թույլ է տվել Գ. Կարախանյանին պարզելու դրա մի հոմանիշը: Ըստ այդմ բառս նաև Աշանակում է խորթ եղբայր. «ոչ արյունակցական կապով մեկի եղբայր. նոր կամ մոր կողմից որդեկարգվելով եղբայր դարձած (Մուշ, Ակա)» (Էջ 171): Բայց կամ նաև բառի այլացումներ՝ ժողովրդախոսակցական արտահայտությամբ և՝ ա'լլ իմաստով. Աղբերգիր (25), Աղրզիր. «Եղբայրության, հարազատ բարեկամության ոլսու, որը կատարվում էր եկեղեցու ձեռագիր Ավետարանի վրա երդում տալով (Վան, Մուշ, Խարբերդ, Հարք, Խնուս, Էջ 26):

Աղիսացք բառը Ու. Ղազարյանի «Գրաբարի բառարանում» հակիրճ բացատրություն ունի. «աղիսակ շինութիւններ, բազիններ»: Իրքն հիմ աշխարհի մշակութիւն ամենապետի մի արտահայտություն դա առավել մանրամասն է Աերկայացված այստեղ. «Տերակոտա. կավից կերտված արձանիկներ, որոնք Հայաստանու հայտնի են մ.թ.ա. IV-III հազարամ-

յակների հնավայրերից, զանգվածաբար հանդիպում են Հայաստանի հեղեճիստական ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնի հավաքածուներում» (Էջ 28):

Բառարամները չունեն Անդուխեկցություն (հուղարկավորություն, Էջ 41), Հրեխմադիր (որսորդ, Էջ 199), Եղուստր (իշխանական պատվանում, տիտղոս, Էջ 174), համելուկի հնարույր հոմանիշը՝ Գտնուչելիք (133), որ Առ-Անախչեանցիները բերած պիտի լինեն Աճի մայրաքաղաքից և այլն, մինչեռ բանասիրությանը հայտնի է համելուկի բան անվանում, այդ թվում գուսմելիք<sup>3</sup>: Այս շարքում կարող է հիշվել Աճի քաղաք այսօր նև շատ տարածված մանկական խաղը (Էջ 42), որ կլաս է կոչվում:

Մի քանի հազարամյակ ընդգրկող բազմազան հետաքրքրական հոդվածները լայն պատկերացում են տալիս հայոց ժողովրդական մշակույթի մասին: Դարավոր հնությունների կողքին հանդիպում են և մեր օրերի տրամադրություններն արտացոլող երևությունը: Դաշտային արշավների ժամանակ Աշոցքի Գոգովիտ զյուղում հևդինակը որսացել է զեղչկուրու հոգեկան զեղումը. Աղիճը (Եղիճ) բարի համար Վկայարերված է անեծք, որ, հավանաբար, ութունականների վերջին է վերաբերում. «Աղիճի փշերից քեզ վերմակ կարեմ, Գորբաչով» (Էջ 27):

Կարելի է, անշուշտ, հետևել ավանդությանը և մատնանշել իմշ-որ բացթողումներ, բայց օգտաշատ այս հանրագիտարանը մեզ չի տրամադրում հետևելու դրան: Թե՞րևս հիշշենք, որ համառոտագրություններն ու մատնագիտությունն զետեղվելու են երկրորդ հատորում. Ծիշտ է, այս հանգամանքն ընթերցողին որոշ դժվարություն է պատճառում, բայց հուսամք, որ երկրորդը չի ուշանա, և այս կմնիող մեջտությամբ կհարթվի:

...Համբերատար, ամաղմուկ աշխատանքով Գ. Կարախանյանը ստեղծել է հայ մշակույթին նվիրված շատ օգտակար մի տեղեկատու, որտեղ ընթերցողը կգտնի նաև կենցաղային օգտակար խորհուրդներ, ժողովրդական բժշկության բազում դեղամիջոցներ, որոնք դարավոր փորձով ստուգվել-սրբագրվել են, և այսօր դրանցից շատերը կիրառելի են:

<sup>3</sup>Տե՛ս Ասատոր Մնացականյան, Հայ միջնադարյան համելուկներ, Երևան, 1980, Էջ 6-7: